Ամլ զի յոգունց աւուրց կենդանութեան պէտք են Վեհիզ զաղջաշէն ձեռնարկող անխոչընդոտն պահակաց յանբոկ տանել, նա մանաւանդ փառակորոյս Հայաստանի ապագայ սերնդոց երջանկութեան պատարուն յուսով զակաղձուն նաւս ի նաւահանգիստ վարել, զհրաշակերտ նորոգ ճեմանարանն ասեմ՝ Մայր Աթոռոյս, յորմէ աղբերաբար յորդեալ զմանուածաւալ վտակս ջրոց կենդանութեան յԱդգս Հայոց՝ շիջուցցես զպասուք տգիտութեան նոցին. որով որդւոց յորդիս յԱդգս մեր յաւերժասցի յիշատակ մեծարելի անուան Ձերոյ յոսկեղինիկ մատեանս բառացի դրուատեալ, և յաւէտ ի տախտակ սրտից Հայկազանց անջինջ դրոշմեալ։

Վասնորոյ պատկառելի՛ և սրբազնազարդ կաճառ ի մրմունջ խնկանուէր մաղթանաց ի ցոյց երախտագիտական զգացման, և զմեզ ստանձնեալ սեպուհ պարտաւորութեան՝ ընդ իս ձայնարկուք գոչեսցո՛ւք կեցցէ՛, կեցցէ՛ անուաղ բարբրութեամբ Վեհափառ Հայրապետս ամենայց Հայոց Տէր Գէորգ ընդ երկայն աւուրս՝ յառողջութեան և ի ցնծութեան, յանդորրութեան և ի բարեջանիկ խաղաղութեան։ Ցաւկցէ՝ Տէր զաւուրս կենդանութեան Սորա. և տացէ Սմա զկարողութիւն՝ ի լուսաւորութիւն և ի կրթութիւն, ի բարեկեցութիւն և ի յաղատաքայլ առաջադիմութիւն Ազգիս Հայոց. ամէն։

Աշխ. Բ. դպր. Ս. Աթոռոյս
Երանոս Գէորգեան։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՄԵԾ ՓԱՌԱՆԱՑԱՊԵՏ ԱՄԵՆԵՐԱՆԵԱՆ ՏԷՐ.

Օրս այս ահա՛ մեզ օր շարժառիթ ուրախութեան սրտից, օր նշանաւոր անսահման ցնծութեանս մերոյ, և մեծապայծառ տօնախմբութեան Վեհափառ անուան Ձերոյ՝ յանհաս ի վերնական Աջոյն ընտրելոյդ ի փոխանորդութիւն Աթոռոյ Հայրապետութեան սրբոյ Հօրն մերոյ Լուսաւորչին Հայաստանեայց. յորում՝ հաւախմբեալ որդեգրացս պարակցութեամբ համայն հոգևոր ուխտս ի հանդիսի ասա մաղթանաց անուանակոչութեան Ձերոյին Աստուածընտիր Վեհափառութեան, վստահութիւն յանձին բերեալ իբրև բերանս համերամ՝ աշակերտակցացս՝ ներբողեմ՝ ի ձայն բարեբանութեան զոր յիշատակի վսեմափառ Անուան Ձերոյ, և շնորհաւորեմ՝ զողջամբ վերադարձ Ձեր ի Գերապահ սրբարանս՝ ի Լուսաւորութիւն մանկանցս Սիոնի և ի բարեկեցութիւն համայն միաբանական ուխտի ընդհանրական Կաթուղիկէ սուրբ Էջմիածնի. ուստի և յոյսամիկ հանդիսի եկաւորութեան Ձերոյ՝ ի լուր համայն Հայկազնեայց հուշակեմք զմեծամեծարար շնորհս երախտեաց Ձերոց առ բոլոր ժողովուրդս մերազանց ի վիճակս Ռուսաստանեայց ի փոքու միջոցի եռամեայ հոգևոր իշխանութեան Ձերոյ. որով բարձրացեալ Ձեր Ամենայն ընդհանուր Հայրապետութեան ազգիս, արեգակնօրէն ծաւալեցիք զլոյս գիտութեան առ ամենայն ժողովուրդս քաղաքաց քաղաքաց, յորս տատապէին անկարող և անօգնական ազգ մեր կարօտք գիտութեան և շնորհաց իմաստութեան։

Ձեօք Վեհափառ Հայրապետ, և Ձերոյին շնորհիւ և ընդհանուր հրամանաւ կառուցան վարժարանք ի քաղաքս, կանգնեցան կացին դպրոցք ի գիւղօրայս, և հաստատեցան կրթարանք հոգևորականաց ի վանօրայս ազգիս. ուստի և առաքինական և ազգասիրական գործք Ձեր այսօրինակ ի զարգացումն ազգիս լուսաւորութեան՝ ոչ նմանօրինակ սրբոց Հայրապետացն մերոց Թարգմանչաց, այլ և գերազանց իսկ այո՛ քան զնոցին վաստակն գրաւորականս՝ քարոզի արդ ի համայնից զաչս ի գլուխս ունողաց և հանճար ի միտս բանականին, հաստատութեամբքն ասեմ՝ ուսումնարանաց և մշանջենաւորութեամբ յիւրաքանչիւր ի նոսին բարեկարգութեանց, որովք պահպանի և յառաջանայ ուսումն գիտութեան և զարգացման Հայկազնեայց մանկանց ի բարեբաղդութիւն ընդհանուր Հայաստանի, յորս գիտութեամբն յառաջանան արուեստք, և արուեստիւք հարստութիւն և բարեկեցութիւն ժողովրդոց, և ի ձեռն նոցին՝ աճի սէր քրիստոնէական հաւատոյ և ջերմեռանդութիւն և միութիւն հոգեկան՝ առ Հայրապետական Աթոռ Ձեր և առ Ձեզ իսկ մշանջենաւորապէս։

Ո՛չ և Աթոռս Ձեր և մեր իսկ բոլոր ուխտ հոգևորականաց զուրկ է ապաքէն ի շնորհաց այսօրինակ երախտեաց Ձերոց և փութոյ եռանդեան ազգասէր և ուսումնասէր սրտից Ձերոց.

Ուստի փառս վերառաքելով առ Ամենաբարձրեալն Աստուած, ի մաղթանաց ժամուս՝ ուխտիւք միաբանութեամբ և բոլոր հանդիսականացս, մաղթեմք ի նմանէ երկարել Ձեզ զաւուրս բազումս յամենացանկալի կեանս Ձեր՝ յառաքինական գործս բարութեան, ի բարեբաղդութիւն մեր և բոլոր ազգիս լրութեան, և յերջանիկ Հայրապետութիւն ամենայն Հայոց. ամէն։

Աշխ. Բ. դպր. Ս. Էջմիածնի
Մկրտիչ Յովակիմեան Շահնազարեանց։

Վեհ. Կաթողիկոսի ի Տփխիսոյ մեկնած օրը՝ "Հայկ. աշխարհ", ամսագրոյ Խմբագիրը Պ. Ստեփան Ստեփանէ հետևեալ ուշադրութեան արժանի ճառը մատուցած է Տերին Ս. Օծութեան։